

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԻՍՊԱՆԵՐԵՆ ԼԵԶՈՒՄ

Ա.Տ.Արսենյան

Հատուկ անունների խոսքիմասային պատկանելության հարցը հետաքրքրել է և շարունակում է հետաքրքրել շատ հետազոտողների: Թվում է, թե *հասարակ անուն – հատուկ անուն* հակադրությունը ինքնին հուշում է, որ երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է գոյականների, սակայն կան հարցեր, որոնք մինչև օրս մնում են վիճահարույց:

Ինչպես նշում է իսպանացի հայտնի լեզվաբան Ռամոն Ալմելա Պերեսը, հասարակ և հատուկ անունների միջև կան մի շարք ընդհանուր գծեր: Հիմնական ընդհանրությունն այն է, որ երկուսն էլ համարվում են «ինքնուրույն տարրեր» և օժտված են շարահյուսական նույն գործառնություններով: Ինչ վերաբերում է հասարակ և հատուկ անունների քերականական կարգերին, այստեղ կան որոշ անհամապատասխանություններ:

Իսպաներենում, ինչպես հայտնի է, հասարակ անունները բնորոշվում են թվի, սեռի և հոդառության քերականական կարգերով՝ *un libro, los libros* «գիրք, գրքերը», *una mesa, las mesas* «սեղան, սեղանները» և այլն: Հատուկ անունները նույնպես ունեն այդ քերականական կարգերը, սակայն մի շարք առանձնահատկություններով տարբերվում են հասարակ անուններից:

ա. Թվի քերականական կարգը

Հասարակ անուններում հոգնակին կազմվում է բառավերջին-՝ վերջածանցի հավելումով. թվի ցուցիչ են հանդիսանում նաև հոդերը՝ *unos libros* «մի քանի գիրք, ինչ-որ գրքեր», *unas mesas* «մի քանի սեղան, ինչ-որ սեղաններ», *los libros* «գրքերը», *las mesas* «սեղանները» և այլն: Այս կառուցվածքներում եզակին և հոգնակին միմյանց հակադրվում են իրենց իմաստային բովանդակությամբ կամ քանակական տարբերությամբ, այսինքն՝ առանձին վերցված՝ մեկ առարկան կամ երևույթը հակադրվում է նույն առարկայի կամ երևույթի մեկից ավելի քանակությամբ:

Կառուցվածքային առումով հատուկ անունների թվի քերականական կարգը չի տարբերվում հասարակ անունների թվի քերականական կարգից, քանի որ երկու դեպքում էլ հոգնակիի ցուցիչները նույնն են: Տարբերությունները սկսվում են իմաստային դաշտում: Որոշ հատուկ անուններ հոգնակի են իրենց արտահայտած իմաստներով, ինչպես օրինակ՝ *Buenos Aires* (բառացի՝ «բարի քամիներ»), *Los Angeles* (բառացի՝ «հրեշտակները»), *Pirineos* Պիրենեյներ («Պիրենեյան լեռներ») և այլն: Այս հատուկ անուններում հոգնակիության գաղափարը կարծրացած ձևով գալիս է այն ժամանակներից, երբ դրանք հասարակ անուններ էին և արտահայտում էին կոնկրետ իմաստներ, որոնք հասկանալի են նաև այսօր: Սրանք չեն կարող հակադրվել եզակի թվով տարբերակներին, քանի որ այդպիսիք գոյություն չունեն:

Ինչ վերաբերում է անձնանուններին, այստեղ տեսնում ենք հակառակ պատկերը: Եթե *los libros* «գրքերը» ձևը հանդիսանում է *el libro* «գիրքը» ձևի հոգնակին, ապա նույնը չի կարելի ասել *Juan – Juanes, María – Marías* զուգահեռ տարբերակների մասին, քանի որ հոգնակի ձևերում փոխվում է հատուկ անունների կարգավիճակը: *Juan* անունը բնորոշում է կոնկրետ անձի, մինչդեռ *Juanes* հոգնակին իր իմաստով հեռանում է տվյալ անձից և բնորոշում այդ անունը կրող մեկից ավելի անձանց: Ի տարբերություն *los libros* «գրքերը», *las mesas* «սեղանները» հասարակ անունների, *Juanes* և *Marías* հատուկ անունները չեն նշանակում մեզ ծանոթ և անհատականացված անձանց՝ *Խուանի* կամ *Մարիայի*, հոգնակի թիվը, այլ բնորոշում են այդ անունները կրող մեկից ավելի անհատների, այսինքն՝ վերածվում են հասարակ անունների և ցույց են տալիս որոշակի խումբ, դաս:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ *Juanes, Marías* և նման կազմությունները չեն հանդիսանում *Juan* և *María* եզակի ձևերի հոգնակին, ուստի թվի քերականական կարգի

տեսանկյունից հատուկ և հասարակ անունների միջև կան էական տարբերություններ, որոնք պայմանավորված են այդ գոյականների իմաստային առանձնահատկություններով:

բ. Սեռի քերականական կարգը

Բացի այն դեպքերից, երբ գոյականի սեռը արտահայտված է բառիմաստով՝ *hijo* «որդի», *hija* «ղուստը», *padre* «հայր», *madre* «մայր» և այլն, իսպաներենը տարբերում է երկու սեռ՝ արական և իգական՝ *un libro* «սեղան» (արական), *una mesa* «սեղան» (իգական) և այլն: Շնչավոր գոյականների մեծ մասում նկատվում է իմաստային հակադրություն, որը, բացի բառիմաստով արտահայտված սեռից, նշույթավորված է *-o* և *-a* մասնիկներով՝ *amigo – amiga* «ընկեր-ընկերուհի», *hermano–hermana* «եղբայր-քույր», *vecino–vecina* «հարևան-հարևանուհի» և այլն: Սրանից չի բխում, թե *hermana* «քույր» բառը հանդիսանում է *hermano* «եղբայր» բառի իգական սեռը, քանի որ դրանք տարբեր բառեր են և բնորոշում են տարբեր անձանց: Այս առումով հատուկ անունների սեռի քերականական կարգը, ըստ էության, շատ չի տարբերվում հասարակ անունների սեռի քերականական կարգից՝ *María* իգական անձնանունը իր սեռով և իմաստով ոչ մի կապ չունի *Mario* արական անձնանվան հետ:

Նկատենք նաև, որ հատուկ անուններն էլ իրենց հերթին բաժանվում են շնչավորների և անշունչների: Վերջիններիս պարագայում գործել է *հասարակ անուն–հատուկ անուն* զարգացումը, որի արդյունքում հասարակ անունները վերածվել են հատուկ անունների՝ պահպանելով իրենց սեռը, ինչպես օրինակ՝ *La Mancha* (բուն իմաստը՝ «քիժ, կեղտի հետք»), *Las Vegas* (բուն իմաստը՝ «մարգագետիններ»), *El Prado* (բուն իմաստը՝ «արոտավայր») և այլն:

Ինչ վերաբերում է հատուկ անունների հոդառությանը, այդ հարցը բավական ընդարձակ ուսումնասիրություն է պահանջում, որին ուստի կանրադառնանք հետագա հոդվածներում:

Ալմելա Պերեսը ներկայացնում է Բառենչեսայի կարծիքը, համաձայն որի՝ բավարար հիմքեր չկան, որպեսզի հատուկ անունները առանձնացվեն հասարակ անուններից և դիտվեն իբրև ինքնուրույն տեսակ կամ խումբ, քանի որ և հատուկ և հասարակ անունները օժտված են օբյեկտիվ իրականությունն արտացոլելու ունակությամբ՝ մասնավոր կամ ընդհանուր ձևով:

Իսպանագիտական աղբյուրներում հատուկ անվան սահմանումը շատ հստակ է տարընթերցումներ չի հարուցում: «Հատուկ անունը,– կարդում ենք Մարտինես Ամադորի «Քերականական բառարանում»,– այն է որը տրվում է որոշակի անձի կամ երևույթի, որպեսզի նրան տարբերի նույն տեսակի կամ դասի մնացած ներկայացուցիչներից»: Նույն հատուկ անունը կարող է տրվել տարբեր մարդկանց կամ երևույթների, սակայն բոլոր դեպքերում էլ այն ունի տարանջատող և մասնավորեցնող գործառույթ:

Ուշագրավ են հատկապես նույն բառարանում ներկայացված հատուկ անունների մեկնության օրինակները՝ *Անտոնիո*. «մարդ, որը կրում է այդ անունը», *Ռոսի-մանտե* «Դոն Կիխոտի ձին», *Տոլեդո* «նշանավոր քաղաք Իսպանիայում» (1246):

Եթե առաջնորդվենք զուտ քանակական չափանիշներով, ապա պետք է փաստենք, որ հատուկ անունները, որպես բառապաշարի տարրեր, կազմում են հսկայական մի զանգված, որն իր ամբողջության մեջ կարող է գերազանցել հասարակ անուններին: Տեղանունները, անձնանունները, գրական երկերի և արվեստի ստեղծագործությունների վերնագրերը, պետական հիմնարկների, հաստատությունների և կազմակերպությունների անվանումները, դիցաբանական, առասպելաբանական անունները, այլ լեզուներից փոխառյալ անթիվ-անհամար անվանումները չեն կարող տեղավորվել անգամ մի քանի հատորանոց բառարանում:

Սրանց պետք է գումարել նաև ամեն օր ստեղծվող նոր անունները, որոնք գալիս են նշանակելու նոր իրողություններ:

Գործնականում անհնար է ողջ այս զանգվածը բերել ընդհանուր հայտարարի և ուսումնասիրել դրա ինչ-ինչ հայեցակետերը: Այդ իսկ պատճառով հետազոտողները կատարում են որոշակի դասակարգումներ և խմբավորումներ՝ ելնելով հատուկ անունների հիմնական առանձնահատկություններից: Իսպանագիտական աղբյուրներում լայն տարածում են գտել հատկապես Լենցի առաջարկած խմբավորման սկզբունքները: Դրանք տեղ են գտել Մարտինես Ամադորի «Քերականական բառարանում», որը իսպաներենի քերականության լավագույն և առավել ամբողջական սկզբնաղբյուրներից մեկն է:

Ըստ այդ հրատարակության՝ իսպաներենում հատուկ անունները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ *օրգանական* և *անօրգանական* (*orgánicos e inorgánicos*): Ընդհանուր առմամբ, այս տերմինները կարող են համապատասխանել հայերեն *շնչավոր* և *անշունչ* տարբերակներին:

Օրգանական կամ շնչավոր հատուկ անուններով բնորոշվում են *կենդանական աշխարհի* ներկայացուցիչները, որոնք բաժանվում են երեք խմբի՝ *մարդիկ*, *կենդանիներ* և *բուսական աշխարհ*: Լենցը ընդունում է, որ այս վերջին ենթախմբին պատկանող հատուկ անունները մեծաթիվ չեն, բայց գոյություն ունեն: «Կարելի է խոսել ծառերի մասին, - գրում է նա, - որոնք տնկվել են ինչ-որ առիթներով՝ ի հիշատակ այս կամ այն նշանավոր իրադարձության՝ *la Encina de la Paz* «Խաղաղության կաղնի» կապակցությունը, օրինակ, կարող է համարվել հատուկ անուն»:

Ինչ վերաբերում է անօրգանական կամ անշունչ հատուկ անուններին, սրանք բաժանվում են երկու ենթախմբի՝ *բնական* և *կառուցված*, այսինքն՝ արհեստական (*naturales y contruidos*). Առաջին ենթախմբում Լենցը գետեղում է աստղերի, մայրցամաքների, կղզիների, լեռների, գետերի, լճերի անունները, իսկ արհեստականների ենթախմբում՝ քաղաքների, տների, նավերի, հուշարձանների անվանումները:

Եթե հետևելու լինենք այս խմբավորմանը, ապա կարող ենք խոսել նաև այլ ենթախմբերի գոյության մասին՝ նկատի ունենալով գրական երկերի, արվեստի ստեղծագործությունների, զանազան ապրանքների տեսակների, մակնիշների և այլ բաների անվանումները, որոնք պատկանում են *արհեստական* հատուկ անունների խմբին: Այդուհանդերձ, չի կարելի ասել, թե Լենցի առաջարկած խմբավորումը ամբողջական և ընդգրկում է հատուկ անունների բոլոր տեսակները կամ գոնե հստակորեն տարանջատում է բնական և արհեստական հատուկ անունները:

Նախ պետք է նկատի ունենալ այն, որ շատ հաճախ միևնույն հատուկ անունը կրում են և բնակավայրերը, և նավերը, և հուշարձանները, այսինքն նկատվում է հատուկ անունների, այսպես կոչված ներքին տեղաշարժ՝ անձնանունից՝ տեղանուն, տեղանունից՝ անձնանուն և այլն:

Ընդհանրապես, հատուկ անունների ձևավորումը շարունակական և երբեք չընդհատվող գործընթաց է, որի մեջ շատ հաճախ էական դեր է խաղում անհատական գործոնը: Իսպանական ազնվական տոհմանուններում, օրինակ, կան տեղանվանական, այսինքն՝ *արհեստական* տարրեր: Այսպես, *Antonio de las Casas* անունը, լինելով ամբողջական կազմություն՝ անձնանուն, իր մեջ պարունակում է երկու հիմնական տարր՝ բուն *Antonio* անձնանունը և *de las Casas* տոհմանունը, որն իր տեսակով պատկանում է արհեստական հատուկ անունների խմբին:

Հատուկ անունների՝ հստակորեն դասակարգման այս և այլ կարգի դժվարություններն են պատճառը, որ մասնագետներն իրենց ուսումնասիրությունները սահմանափակում են երկու մեծ խմբով՝ անձնանուններով և տեղանուններով, քանի որ դրանք առավել հաճախ են գործածվում և կարիք ունեն կանոնակարգման: Եվ քանի որ սահմանված կանոնների մասին բազմիցս խոսվել է տարբեր գրքերում, մի քանի խոսքով անդրադառնանք այն օրինակներին, որոնք դուրս են գալիս ընդհանուր կանոնակարգման շրջանակներից և հարուցում զանազան դժվարություններ:

ա. Անձնանունների ձևավորման մեջ նկատվում է երկու հիմնական միտում՝ *արական անձնանունների իզականացում* և *իգական անձնանունների արականացում*: Որպես կանոն, դա կատարվում է վերջավորությունների փոփոխության միջոցով, ընդ որում, իսպաներենի համար շատ սովորական են *արականիզական* անցումները՝ *Pedro-Petra, Enrique-Enriqueta, Carlos-Carlota, Cristobal-Cristobalina* և՝ *Juan-Juana, Luis-Luisa, Agustín-Agustina, Emilio-Emilia, Eugenio-Eugenia* և այլն: Համեմատաբար քիչ են իգականից արականի վերածված անձնանունները, որոնք աչքի են ընկնում իրենց արտառոցությամբ՝ *Catalino (Catalina-ի արական սեռը), Basiliso (Basilisa-ի արական սեռը), Tereso (Teresa-ի արական սեռը)* և այլն:

բ. Բազմաթիվ դեպքերում հասարակ անունները վերածվում են անձնանունների՝ պահպանելով իրենց քերականական սեռը: Նման օրինակների թվում Մարտինես Ամադորը հիշատակում է *trinidad* «երրորդություն» և *adoración* «երկրպագություն, պաշտամունք»

բառերը, որոնք դարձել են անձնանուններ: Այստեղ ուշագրավն այն է, որ այդ երկու բառերն էլ իգական սեռի են, սակայն, վերածվելով անձնանունների, դառնում են «երկսեռ»՝ *Doña Trinidad* «տիկին Տրինիդադ» և *Don Trinidad* «պարոն Տրինիդադ», *Doña Adoración* «տիկին Ադորասիոն» և *Don Adoración* «Պարոն Ադորասիոն»:

Նկատվում է նաև հակառակ երևույթը, երբ անձնանունն ըստ իր վերջավորության արական է, սակայն ստանում է որոշիչ *la* հոդը և վերածվում իգական սեռի անձնանվան, ինչպես օրինակ՝ *Amparo, Olvido, Rosario* և *la Amparo, la Olvido, la Rosario* և այլն: Այլ կերպ ասած, կանայք կրում են արական անձնանուններ, որոնք վերաառկայացվում են իգական սեռի *la* որոշիչ հոդի միջոցով:

գ. Պատկերը շատ ավելի բարդ և հակասական է տեղանունների պարագա-յում: Թագավորությունների, գավառների, քաղաքների ու բնակավայրերի անվանումների մեջ, որպես ընդհանուր կողմնորոշիչ, ելակետային է համարվում տեղանվան վերջավորությունը, որն էլ հուշում է դրա սեռը: Սակայն այստեղ ի հայտ են գալիս մի շարք հակասություններ և անբացատրելի երևույթներ: Քաղաքների անվանումների տակ, մասնավորապես, ենթադրվում է երկու հիմնական իմաստ՝ «քաղաք» և «գյուղ»: Առաջինը իսպաներենում արտահայտվում է իգական սեռի *ciudad*, իսկ երկրորդը՝ արական սեռի *pueblo* բառով: Մարտինես Ամադորը նշում է *Snjեղո* անվան հետ կապված հետևյալ հետաքրքրական օրինակը. *pasado Toledo* «անցնելով Տոլեդոն» և *toda júbilo es hoy la gran Toledo* «այսօր ողջ մեծ Տոլեդոն ցնծության մեջ է»: Երկու դեպքում էլ գործածվել է միևնույն *Toledo* անունը, որը, ըստ իր վերջավորության, պետք է որ ընկալվի իբրև արական սեռի: Սակայն *pasado Toledo* կապակցության մեջ դրան վերագրվում է *pueblo* «գյուղ» իմաստը, մինչդեռ *la gran Toledo* կազմության մեջ՝ *ciudad* «քաղաք» նշանակումը, ուստի *Snjեղո* քաղաքանունը մի դեպքում դառնում է արական, մյուսում՝ իգական:

Նույն պատկերն է տիրում նաև արականի կառուցվածք ունեցող այլ տեղանուններում: Այսպես, *todo Madrid* «ողջ Մադրիդը» կապակցության կողքին կան նաև իգական սեռով կազմություններ, որոնցից ամենաուշագրավն է *Lamadrid* անձնանունը: Իսպաներենում *Lոնդոն* քաղաքանունը ունի *Londres* ձևը, որը ենթադրվում է արական սեռ, սակայն գործածական է *la opulenta Londres* «առատ *Lոնդոն*ը» կազմությունը, որը իգական սեռի է:

Ավանդաբար, արական սեռին բնորոշ *-o* վերջավորությունը ունեցող քաղաքանունները՝ *Corinto, Sagunto, Cartago* և այլն, առանց բացառության, իգական սեռի են, որը գալիս է, ինչպես ասվեց, այդ անվանումներին վերագրվող «քաղաք» իմաստից, որն արտահայտվում է իգական սեռի *ciudad* բառով:

Հատկանշական է, որ լատինաամերիկյան որոշ երկրերում տեղանունների զարգացումը գնացել է ուրիշ ճանապարհով, որը գալիս է այդ երկրի վարչական-քաղաքական բաժանմանն առանձնահատկություններից: Չիլիում, օրինակ, բոլոր քաղաքների, գյուղերի և բնակավայրերի անվանումները, առանց բացառության, արական սեռի են: Պատճառն այն է, ինչպես նշում են հետազոտողները, որ Չիլիի խոսակցական լեզվում չկա քաղաքի ըմբռնումը, այլ միայն գյուղի՝ *pueblo*: Ըստ այդ պատկերացումների, չիլիացիներն ասում են՝ *todo Santiago* «ողջ Սանտյագոն», բայց, դրան գուցահեռ՝ *medio Talca* «Տալկայի կեսը», որն իր կառուցվածքով պահանջում է իգական սեռ: Ավելին, *La Serena es más bonito que Coquimbo* «Լա Սերենան ավելի գեղեցիկ է, քան Կոկիմբոն» նախադասության մեջ *La Serena* բացարձակ իգական կազմությունը հակասության մեջ է մտնում *bonito* «գեղեցիկ, հրապուրիչ» ածականի արական սեռի հետ:

դ. Ինչպես նշում է ճանաչված լեզվաբան Անդրես Բելյոն, իսպաներենի ամենաանբացատրելի հակասություններից մեկը կապված է այն բանի հետ, որ շատ հաճախ արական սեռի *un* անորոշ հոդով և *medio* «կես» ածականով առկայացվում են իգական սեռի հատուկ անուններ՝ անկախ դրանց վերջավորություններից: Նա բերում է հետևյալ օրինակները՝ *en un Segovia no se encuentra una buena posada* «Մեզովիայում չկա ոչ մի լավ իջևանատուն» և *lo ha visto medio Sevilla* «Սևիլյայի կեսը դա տեսել էր», որոնցից առաջինում իգական սեռի *Segovia* քաղաքանունը առկայացել է արական սեռի *un* անորոշ հոդով, իսկ իգական սեռի *Sevilla* տեղանունը՝ արական սեռի *medio* «կես» ածականով:

Այս անկանոնությունը այնպիսի տարածում է գտել, - գրում է Բելյոն, որ ճիշտ տարբերակը՝ *una* և *media* իգականներով, թվում է միանգամայն անթույլատրելի: Մի կողմից՝

Segovia և *Sevilla* քաղաքանուններն իրենց *-a* վերջավորությամբ պահանջում են իգական սեռ, մյուս կողմից՝ դրանք արդեն առկայացված են արական սեռի *un* անորոշ հոդով և *medio* «կես» ածականով: Եվ այն դեպքերում, երբ նման կապակցությունները կանգնում են որոշ բաղադրյալ ժամանակաձևերով գործածվելու անհրաժեշտության առաջ, ստեղծվում է անորոշ վիճակ, մասնավորապես՝ ստորոգյալի բաղադրիչ հանդիսացող հարակատար դերբայի առումով, քանի որ այն իր սեռով և թվով պետք է համապատասխանի ենթակայի հետ: Ո՞րն է ճիշտ ձևը՝ *medio Granada fue consumido por las llamas*, թե՞ *fue consumida*: Տալով այս հարցը՝ Բելլոն եզրակացնում է, որ նման կազմություններում գոյականը կորցնում է իր բնական սեռի գաղափարը և ստանում արական սեռ, ուստի ճիշտ կլինի հարակատար դերբայը ևս գործածել արականով՝ *consumido*: (1246):

Ամեն դեպքում, այդօրինակ կառուցվածքները, ինչպես նաև *en Barcelona mismo* «հենց Բարսելոնում» տիպի կազմությունները, որևէ հիմնավոր բացատրություն չունեն:

Բոլոր այս հակասությունները և անբացատրելի երևույթները գալիս են նրանից, որ հատուկ անունների ձևավորման և գործածության մեջ շատ մեծ է սուբյեկտիվ գործոնը. ցանկացած մարդ ցանկացած դեպքում կարող է հասարակ անվանը տալ հատուկ անվան կարգավիճակ կամ, պարզապես, ստեղծել նոր հատուկ անուն: Բացի այդ, *Sn̄t̄eh̄n*, *Մաղրիդ* և վերը նշված մյուս քաղաքանունները մեկ իսպանացու մոտ ենթագիտակցաբար կարող են կապված լինել իգական սեռի *ciudad* «քաղաք» բառի, իսկ մեկ ուրիշի համար՝ արական սեռի *pueblo* «գյուղ» բառի հետ:

Գրականություն

1. Ramon Almela Perez, "Materiales para el estudio de la gramatica española", Madrid, 1996
2. Martinez Amador, "Diccionario gramatical", Barcelona, 1956
3. Francisco Marcos Marin, "Curso de Gramatica Española", España 1987
4. Amado Alonso, Pedro Henriques Ureña, "Gramatica Castellana"
5. "Esbozo de una Nueva Gramatica de la Lengua Española" Real Academia Española.

Резюме

В этой статье представляются некоторые особенности имен собственных в испанском языке, их грамматические категории рода и числа в сравнении с именами нарицательными, и некоторые классификации вышеупомянутых имен, представленные известными языковедами.

Также затрагиваем некоторые вопросы, связанные с именами собственными, которые выходят за рамки принятых норм и создают трудности при употреблении.